ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2020թ. սեպտեմբերի 30 N 280

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի N 54-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ կետով, 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 34-րդ հոդվածի 1-ին կետը

Ո ր ո շ ու մ ե մ՝

1. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական մշտական հսկողության համակարգ ստեղծելու մասին>> Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2005 թվականի նոյեմբերի 1-ի N 54-Ա որոշման 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<1) Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության Արագածոտնի մասնաճյուղ,

2) Հայաստանի Հանրապետության <<Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին>> հյուսիսային տարածքային կենտրոն,

3) Հայաստանի Հանրապետության <<Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին>> Արագածոտնի մարզային կենտրոն,

4) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության <<Հիդրոօդերևույթաբանության և մոնիթորինգի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության Աշտարակի, Ապարանի, Թալինի և Արագածի տարածքային ստորաբաժանումներ,

5) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի առաղջապահության և սոցիալական ապահովության վարչություն,

6) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն,

7) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչություն,

8) <<Նաիրի Լենդ>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

9) <<Թամարա Ֆրուտ>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

10) <<Աշտարակյան գինիներ>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

11) <<Արմենիա Վայն>> փակ բաժնետիրական ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա,

12) <<Հայասի Գրուպ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության քիմիական և մանրէաբանական լաբորատորիա>>:

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ.ԳԵՎՈՐԳՅԱՆ